ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Համայնքային աղքատության հաղթահարման փորձառություն/Community Poverty Reduction “Know How”
ԾՐԱԳԻՐ NEAR-TS/2020/421-104

ՀՈՒԼԻՍ 2021

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)

«Համայնքային աղքատության հաղթահարման փորձառություն» ծրագիրն իրականացվում է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ (CRRC), Եվրասիա համագործակցություն հիմնադրամ (EPF) և Հրանտ Մաթևոսյան հիմնադրամ կազմակերպությունների կողմից՝ համագործակցաբար, ԵՄ ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում բազմաչափ աղքատության մակարդակի կրճատմանը՝ քաղաքացիական հասարակության կարողությունների հզորացման և շահառուների տեղեկացվածության բարձրացման միջոցով, մեծացնելով մասնակցությունը համայնքային զարգացման ծրագրերին և աղքատամետ բարեփոխումների իրականացմանը:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային նախաձեռնություն է: 2001 թվականից ի վեր Կենտրոնն իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնցում բավականին մեծ դեր են ստացել առանձին ոլորտների քաղաքականությունների, ծրագրերի և բյուջեների վերլուծությունները: Կարևորելով հանրային միջոցներով հանրության համար իրականացվող ծրագրերի նպատակայնությունը, հասցեականությունը, իրականացման արդյունավետությունը և հանրության գոհունակությունը՝ Կենտրոնը փորձում է պրոֆեսիոնալ ներդրում ունենալ քաղաքականությունների մշակման և քննարկման գործընթացներում:

Ծրագրի շրջանակներում Կենտրոնն իրականացնում է Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում իրականացվող հանրային քաղաքականությունների և իրականացվող ծրագրերի քարտեզագրման, ՔՀԿ-ների մոնիտորինգի և գնահատման կարողությունների բարելավման, քաղաքականությունների մշակման գործընթացում մասնակցության ընդլայնմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև իրականացվող քաղաքականությունների և առանձին բյուջետային ծրագրերի սոցիալական ազդեցության գնահատում:

«Բյուջետային քաղաքականությունների ամփոփագիր. Տավուշի մարզ» հրապարակումը վերլուծական-տեղեկատվական հաշվետվություն է, որում համառոտ կերպով ամփոփված է մարզի սոցիալ-տնտեսական պատկերը, բյուջեները նկարագրող տարբեր պաշտոնական և համայնքային աղբյուրներից ստացված տեղեկատվությունը: Այն ուղղված է հանրության լայն շրջանակին, ինչպես նաև մասնագիտական հանրույթին՝ նպատակ ունենալով հասանելի դարձնել տեղեկատվությունը և բարձրացնել իրազեկվածության մակարդակը, հիմքեր ստեղծել քաղաքականությունների վերլուծության, արդյունավետ երկխոսության և տեղեկացված քննարկումների համար:

Հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Զեկույցից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 3

ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ 9

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 10

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ 15

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ 17

ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 20

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 24

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ 24

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 25

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Տավուշի մարզը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևելքում՝ սահմանակցելով Ադրբեջանին և Վրաստանին: Մարզը զբաղեցնում է 2,704 կմ^2 կամ հանրապետության տարածքի 9 տոկոսը: Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը 110.7 հազար հա են (ներառյալ 25.6 հազար հա վարելահողեր): Մարզն ունի 24 համայնքներ, որոնք ներառում են 5 քաղաքային և 60 գյուղական բնակավայրեր:

Տավուշի մարզն առանձնանում է հարուստ անտառածածկույթով. տարածքի մոտ 41 տոկոսը զբաղեցնում են խառն անտառները: Մարզի բնակլիմայական պայմանները, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում զբոսաշրջության, հատկապես՝ էկոտուրիզմի զարգացման համար: Հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակով և այդ օբյեկտներում հանգրվանած ներգնա զբոսաշրջիկների թվաքանակով Տավուշի մարզը գերազանցում է բոլոր մարզերին (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը և դրանցում հանգրվանած ներգնա զբոսաշրջիկների թվաքանակն ըստ մարզերի, 2019թ.



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Բնակչություն. 2020 թվականի տարեսկզբի դրությամբ Տավուշի մարզի մշտական բնակչությունը կազմել է 121.5 հազար մարդ կամ ՀՀ բնակչության 4.1 տոկոսը: Մարզի բնակչության 57.7 տոկոսը բնակվում են գյուղական բնակավայրերում, իսկ 42.3 տոկոսը՝ քաղաքային: Քաղաքային բնակչության մեծամասնությունը (73.1 տոկոս) կամ մարզի բնակչության 30.9 տոկոսը բնակվում են Իջևան և Դիլիջան քաղաքներում:

Գծապատկեր 2. Տավուշի մարզի բնակչության կառուցվածքն ըստ բնակավայրերի, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Համախառն թողարկում. 2018 թվականի տվյալներով[1] Տավուշի մարզի ՀՆԱ-ն կազմել է 136.7 մլրդ դրամ՝ ձևավորելով հանրապետական ՀՆԱ-ի 2.3 տոկոսը: Մարզի բնակչության մեկ շնչի հաշվով թողարկված արտադրանքի ծավալը կազմել է 1,113.4 հազար դրամ, ինչը զիջում է միջին հանրապետական ցուցանիշը ավելի քան 45 տոկոսով: Նկատենք, որ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով Տավուշի մարզը զիջում է հանրապետության մյուս բոլոր մարզերին՝ բացառությամբ Գեղարքունիքի մարզի:

Գծապատկեր 3. ՀՆԱ կառուցվածքն ըստ մարզերի, 2018թ., տոկոս



Գծապատկեր 4. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ըստ մարզերի, 2018թ., հազար դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Տնտեսության առավել էական դերակատարում ունեցող ճյուղերն են գյուղատնտեսությունը և շինարարությունը, որոնց կշիռը 2019 թվականին կազմել է հանրապետական ցուցանիշների համապատասխանաբար 4.4 տոկոսը և 3.8 տոկոսը:

Գծապատկեր 5. Տավուշի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի կշիռը համապատասխան ճյուղերի ՀՀ համախառն արտադրանքի ծավալում, 2019թ., տոկոս



Գծապատկեր 6. Տավուշի մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ ճյուղերի, 2019թ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կեսից ավելին՝ 73 տոկոսը բաժին է ընկնում անասնաբուծությանը, իսկ 27 տոկոսը՝ բուսաբուծությանը: Անասնաբուծության առաջատար ճյուղերն են խոշոր եղջերավոր անասնաբուծությունը և խոզաբուծությունը:

Արդյունաբերության ճյուղերից էական է մշակող արդյունաբերության դերը. արդյունաբերական արտադրանքի մոտ 82 տոկոսը բաժին է ընկնում մշակող արդյունաբերությանը: Վերջինիս հիմնական

[1] 2019 թվականի տվյալները հասանելի կլինեն 2021 թվականի վերջին՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021» հրապարակմամբ:

ուղղություններն են սննդամթերքի արտադրությունը՝ 61.0 տոկոս, հագուստի արտադրությունը՝ 19.6 տոկոս և խմիչքների արտադրությունը՝ 16.7 տոկոս:

Զբաղվածություն. Տավուշի մարզը ամենացածր զբաղվածություն և ամենաբարձր գործազրկություն ունեցող մարզն է ՀՀ-ում: Մարզում զբաղվածության մակարդակը կազմում է 36.0 տոկոս, իսկ գործազրկության մակարդակը 26.9 տոկոս: Զբաղվածության մակարդակը զիջում է հանրապետական ցուցանիշը 12.9 տոկոսային կետով, իսկ գործազրկության մակարդակը գերազանցում է հանրապետական միջին մակարդակին 8.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 7. Զբաղվածության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս



Գծապատկեր 8. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Բնակչության եկամուտներ և ծախսեր. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները 2019 թվականին կազմել են 46,419 դրամ, ինչը զիջում է միջին հանրապետական ցուցանիշը 14,657 դրամով կամ 24.0 տոկոսով:

Գծապատկեր 9. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները, դրամ



Աղյուսակ 1. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների կառուցվածն ըստ եկամուտների աղբյուրների, Տավուշի մարզ

	2019	
	դրամ	տոկոս
Ընդամենը	46,419	100.0
Վարձու աշխատանք	22,030	47.5
Ինքնազբաղվածություն	5,012	10.8
Գյուղմթերքի և կենդանիների վաճառք	5,570	12.0
Թոշակներ	7,663	16.5
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացման նպաստներ	803	1.7
Այլ պետական նպաստներ և կրթաթոշակ	37	0.1
ՀՀ-ում ապրող բարեկամներից տրանսֆերտներ	2,403	5.2
ՀՀ-ից դուրս ապրող բարեկամներից տրանսֆերտներ	1,931	4.2
Այլ եկամուտներ	971	2.1

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և ՏԶՀԿ հաշվարկներ

Դրամական եկամուտների կառուցվածքում մեծ է աշխատավարձի կշիռը (47.5 տոկոս), հաջորդում են թոշակները (16.5 տոկոս), գյուղմթերքի և կենդանիների վաճառքից

եկամուտները (12.0 տոկոս) և ինքնազբաղվածությունից եկամուտը (10.8 տոկոս): ՀՀ-ից դուրս ապրող բարեկամներից ստացված դրամական տրանսֆերտները կազմում են SS մեկ շնչի հաշվով եկամուտների 4.2 տոկոսը:

Միջին ամսական աշխատավարձի մակարդակը կազմում է 118,446 դրամ՝ զիջելով հանրապետական միջին ցուցանիշը 35.2 տոկոսով կամ 64,227 դրամով:

Գծապատկեր 10. Միջին ամսական աշխատավարձի մակարդակն ըստ մարզերի, 2019թ., դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

SS մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերը 2019 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել են 31.9 տոկոսով և կազմել 51,802 դրամ:

Գծապատկեր 11. Տավուշի մարզում SS մեկ շնչի հաշվով ամսական սպառողական ծախսերի դինամիկան, 2015-2019թթ.



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և ՏԶՀԿ հաշվարկներ

Աղքատություն. 2019-ին աղքատության մակարդակը[2] Տավուշի մարզում կազմել է 25.6 տոկոս, որը 0.8 տոկոսային կետով զիջում է հանրապետական ցուցանիշը: Ծայրահեղ աղքատության մակարդակը մարզում 2019-ին նվազել է և կազմել է 0.6 տոկոս:

Գծապատկեր 12. Աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների դինամիկան Տավուշի մարզում և ՀՀ-ում, 2015-2019թթ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

2020 թվականի տարեվերջի դրությամբ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ են ստացել մարզի SS-ների մոտ 16 տոկոսը կամ 5,198 SS: Մասնավորապես, ընտանեկան նպաստ են ստանում 3,580 SS, սոցիալական նպաստ՝ 1,313 SS և եռամսյակային հրատապ օգնություն՝ 305 SS:

Գծապատկեր 13. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող SS-ների բաշխումն ըստ մարզերի, 2020 թվականի տարեվերջի դրությամբ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

[2] 2020 թվականին ՀՀ-ում աղքատության գնահատման համար կիրառվել է նոր մեթոդաբանություն («Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020»՝ https://www.armstat.am/am/?nid=81&id=2323): Հետևաբար 2019-ի տվյալները լիովին համադրելի չեն նախորդ տարիների ցուցանիշների հետ:

ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը 2017 թվականին հաստատել է ՀՀ Տավուշի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը[3], որում սահմանվում են մարզում երկարաժամկետ զարգացման հեռանկարները և ուղղությունները:

Ըստ այդ ռազմավարության, Տավուշի մարզի զարգացման տեսլականն է՝ **ունենալ մրցունակ արդյունաբերություն և գյուղատնտեսություն, զբոսաշրջային ենթակառուցվածքներ: Ապահովել մարզի բոլոր տարածքների համաչափ և կայուն զարգացում:**

Ռազավարությամբ սահմանվում են Տավուշի մարզի զարգացման հետևյալ ռազմավարական նպատակները, վերջնական արդյունքների թիրախային ցուցանիշները և զարգացման գերակա ուղղությունները:

Աղյուսակ 2. Տավուշի մարզի զարգացման ռազմավարական ուղղությունները և չափորոշիչները

ՆՊԱՏԱԿՆԵՐ
1. *Տավուշի մարզի մրցունակության բարելավում և տնտեսության դիվերսիֆիկացում:* 2. *Տավուշի մարզում գործազրկության և աղքատության մակարդակի կրճատում:* 3. *Տավուշի մարզում տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունների և համակարգերի բարելավում:*
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
• *2025 թվականին 2015 թվականի համեմատությամբ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղերի և ակտիվ կազմակերպությունների թվաքանակի առնվազն 10 տոկոսային կետով աճ,* • *2025 թվականին մեկ շնչի հաշվով մարզային ՀՆԱ-ն կկազմի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հանրապետական մակարդակի առնվազն 60 տոկոսը,* • *Մինչև 2025 թվականը մարզում գործազրկության մակարդակի կրճատում մինչև 10 տոկոս՝ 2015 թվականի 12.1 տոկոսի դիմաց,* • *Մինչև 2025 թվականը մարզում աղքատության մակարդակի նվազեցում մինչև 25 տոկոս՝ 2015 թվականի 35.3 տոկոսի դիմաց,* • *Մարզի սահմանամերձ տարածքներում երկարաժամկետ գործազրկության և աղքատության մակարդակների մարզային միջինի նկատմամբ հարաբերության կրճատում,* • *Մարզային/տեղական զարգացմանն ուղղված վերապատրաստման ծրագրերի մասնակցած մարզային և համայնքային աշխատողների կշիռը կկազմի առնվազն 85 տոկոս,* • *Մինչ 2025 թվականը մարզի համայնքների խոշորացում՝ 7 խոշորացված համայնքների ձևավորում՝ 2016-ի 40-ի փոխարեն:*
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. *Արդյունաբերության զարգացում՝ հիմնվելով բնական պաշարների և գյուղատնտեսական մթերքների վերամշակման վրա:* 2. *Կայուն զբոսաշրջության զարգացում:* 3. *Ժամանակակից գյուղատնտեսության զարգացում և գյուղական տարածքների բարելավում:*

Աղբյուրը՝ՀՀ Տավուշի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարություն

Կարևորվում են նաև զարգացման այնպիսի հորիզոնական ուղղություններ, ինչպիսիք են՝ գենդերային հավասարությունը և խտրականության բացառումը, շրջակա միջավայրի պահպանությունը և էներգաարդյունավետությունը, տեղեկատվական հասարակության ստեղծումը և մրցակցության պաշտպանությունը:

[3] ՀՀ կառավարությա 2017 թվականի հուլիսի 6-ի N 29 արձանագրային որոշում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Տավուշի մարզի համայնքների բյուջեների ընդամենը ծախսերը 2020 թվականին կազմել են 4,819 մլն դրամ կամ ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի 3.5 տոկոսը, իսկ եկամուտները՝ 4,980 մլն դրամ կամ ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների 3.2 տոկոսը:

Աղյուսակ 3. Տավուշի մարզի համայնքային բյուջեների հիմնական ցուցանիշները, 2018-2021 թվականներ

	2018 Փաստ.	2019 Փաստ.	2020 Փաստ.	2021 Պլան.[4]
ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսեր, մլն դրամ	3,290	4,476	4,819	6,237
ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի աճ, տոկոս	-3.1	36.0	7.7	29.4
ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի կշիռը ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերում, տոկոս	2.8	3.4	3.5	-
ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտներ, մլն դրամ	3,609	4,350	4,980	5,585
ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների աճ, տոկոս	4.6	20.5	14.5	12.2
ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների կշիռը ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտներում, տոկոս	2.8	3.0	3.2	-

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

Տավուշի մարզում համայնքային ծախսերի մեկ շնչի հաշվով միջին ցուցանիշը 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ աճել է ավելի քան 8 տոկոսով՝ 36,612 դրամից հասնելով մինչև 39,674 դրամ մակարդակի: Համայնքային եկամուտների աճն ավելի մեծ է՝ մեկ շնչի հաշվով միջին ցուցանիշը 35,582 դրամից աճել է մինչև 40,994 դրամ կամ 15 տոկոս:

Գծապատկեր 14. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերի ցուցանիշը, ՀՀ դրամ



Գծապատկեր 15. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտների ցուցանիշը, ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՀՀ Տավուշի մարզպետարան, ՀՀ ՎԿ և ՏԶՀԿ հաշվարկներ

Տավուշի մարզում համայնքային եկամուտների նաև համայնքային ծախսերի մակարդակը ցածր է հանրապետական միջին մակարդակից: Մեկ բնակչի հաշվով համայնքային ծախսերի մակարդակով Տավուշի մարզն ավելի քան 15 տոկոսով զիջում է միջին հանրապետական ցուցանիշը: Եկամուտների դեպքում տարբերությունը կազմում է 22 տոկոս:

[4] 2021 թվականին վերաբերվող բյուջետային տվյալները ծրագրային են, իսկ նախորդ տարիների համար՝ փաստացի:

Գծապատկեր 16. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերն ըստ մարզերի, ՀՀ դրամ



Գծապատկեր 17. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտներն ըստ մարզերի, ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՀՀ ՎԿ և ՏՀՀԿ հաշվարկներ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Համայնքային բյուջետային եկամուտների կառուցվածքում գերակշռում են պաշտոնական դրամաշնորհները: 2020 թվականին պաշտոնական դրամաշնորհները կազմել են համայնքային եկամուտների 78 տոկոսը, կամ 3,882 մլն դրամ: Հարկային եկամուտների և տուրքերի կշիռը բյուջեի եկամուտներում կազմել է 13.4 տոկոս կամ 670 մլն դրամ: Նկատենք, որ 2018 թվականի համեմատությամբ պաշտոնական դրամաշնորհների կշիռը համայնքային եկամուտներում աճել է 7.8 տոկոսային կետով, իսկ հարկային եկամուտների և տուրքերի դեպքում՝ նվազել է 3.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Տավուշի մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների կառուցվածքը, 2018 և 2020թթ, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏՀՀԿ հաշվարկներ

Համայնքային եկամուտների աճը հիմնականում ապահովվում է պաշտոնական դրամաշնորհների աճի հաշվին: Վերջիններս նախորդ երկու տարիների ընթացքում աճել են միջինում տարեկան 23.8 տոկոսով: Հարկային եկամուտները և տուրքերը 2019 թվականի

համեմատությամբ նվազել են 3.5 տոկոսով, իսկ 2018 թվականի նկատմամբ աճել են 8.2 տոկոսով:

2021 թվականին կանխատեսվում է, որ ընդամենը համայնքային եկամուտները կկազմեն 5,585 մլն դրամ՝ 2020 թվականի մակարդակը գերազանցելով 12.2 տոկոսով: Ընդ որում, կաճեն եկամուտների բոլոր բաղադրիչները:

Գծապատկեր 19. Տավուշի մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտները, 2018-2021թթ., մլն դրամ



Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ

Ուշագրավ է, 2018-2020 թվականների ընթացքում հարկերի և տուրքերի կառուցվածքում նվազել են անշարժ գույքի հարկերը: Սա վերաբերում է թե՛ համայնքների վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար գույքահարկին, թե՛ հողի հարկին: Համայնքային բյուջեներ ուղղվող տեղական և պետական տուրքերը ևս նվազել են:

Ի տարբերություն անշարժ գույքի, փոխադրամիջոցների համար գանձվող գույքահարկից մուտքերն աճում են:

Գծապատկեր 20. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի կառուցվածքը, 2018-2021թթ., տոկոս



Գծապատկեր 21. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի դինամիկան, 2018-2021թթ., հազար դրամ



Գույքահարկ՝ շենքերի և շինությունների
Գույքահարկ՝ փոխադրամիջոցների
Հողի հարկ
Տեղական և պետական տուրքեր

Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

Մեկ բնակչի հաշվով Տավուշի համայնքներում հավաքագրված անշարժ գույքի հարկի միջին տարեկան մակարդակը կազմում է 1,700 դրամ, իսկ փոխադրամիջոցների գույքահարկի մակարդակը՝ 2,800 դրամ:

Մեկ բնակչի հաշվով հավաքագրված անշարժ գույքի հարկերի ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Ակնաղբյուր համայնքում՝ 4,200 դրամ: Համայնքների մոտ 67 տոկոսի դեպքում անշարժ գույքի հարկի մեկ շնչի հաշվով տարեկան մակարդակը չի գերազանցում 2,000 դրամը:

Հարկ է նշել, որ անշարժ գույքի հարկի ավելի քան 81 տոկոսը բաժին է ընկնում հողի հարկին և միայն 19 տոկոսն է կազմում շենքերի և շինությունների համար վճարվող հարկը: Ընդ որում, մարզի 2 համայնքներում շենքերի և շինությունների համար գույքահարկ ընդհանրապես չի հավաքագրվում՝ պայմանավորված համապատասխան անշարժ գույքի կադաստրային ցածր արժեքով[5]:

Փոխադրամիջոցների գույքահարկի դեպքում բաշխումն ունի հակառակ պատկերը: Համայնքների 50 տոկոսի դեպքում մեկ շնչի հաշվով փոխադրամիջոցների գույքահարկի մակարդակը գերազանցում է 3,000 դրամը:

Գծապատկեր 22. Համայնքների բաշխումն ըստ մեկ բնակչի հաշվով գույքահարկի մակարդակի



1 բնակչի հաշվով	Համայնքների քանակ	Տոկոս ընդամենը համայնքներում
<=1 հազ. դրամ	6	25.0
1-2 հազ. դրամ	10	41.7
2-3 հազ. դրամ	3	12.5
3–4 հազ. դրամ	4	16.7
> 4 հազ. դրամ	1	4.2
Ընդամենը	**24**	**100.0**



<=1 հազ. դրամ	2	8.3
1-2 հազ. դրամ	7	29.2
2-3 հազ. դրամ	3	12.5
3–4 հազ. դրամ	7	29.2
> 4 հազ. դրամ	5	20.8
Ընդամենը	**24**	**100.0**

Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Դրամաշնորհների կազմում գերակշիռ մասը՝ ավելի քան 99.9 տոկոսը կազմում են ներքին դրամաշնորհները, այսինքն՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաները և սուբվենցիաները: Արտաքին դրամաշնորհների մակարդակը շատ փոքր է. 2020 թվականին կազմել է ընդամենը 2.0 մլն դրամ: Արտաքին դրամաշնորհ է ստացել միայն մեկ համայնք՝ Այրում համայնքը:

[5] «Գույքահարկի մասին» ՀՀ օրենք: Ուժը կորցրել է 2021 թվականի հունվարի 1-ին:

Ներքին դրամաշնորհների կառուցվածքում գերակշռում են դոտացիաները: Դոտացիաների միջին տարեկան աճը 2019-2020 թվականների ընթացքում կազմել է 317 մլն դրամ կամ 12.6 տոկոս: Չնայած դոտացիաների բացարձակ աճին, վերջիններիս կշիռը ներքին դրամաշնորհների կառուցվածքում նվազել է՝ 2018-ի 93.4 տոկոսի համեմատությամբ և 2020-ին կազմել՝ 77.1 տոկոս:

Դոտացիաները *համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման (համահարթեցման) նպատակով, պետական բյուջեից տրամադրվող ամենամյա անհատույց հատկացումներ են՝ համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաև բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու համար[6]: Պետական բյուջեից տրամադրվող դոտացիաները բաղկացած են 2 մասից: Առաջին մասով դոտացիաներ հատկացվում են այն համայնքներին, որոնց բնակչությունը չի գերազանցում 3500-ը՝ տվյալ տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով (բոլոր համայնքներին հավասարաչափ): Իսկ երկրորդ մասով դոտացիաներ տրամադրվում են ըստ համայնքների եկամտային կարողության և ծախսային կարիքի[7]:*

Համայնքներին տրամադրվող պետական սուբվենցիաների ծավալների աճի տեմպը գերազանցում է դոտացիաների աճի տեմպին և վերջին տարիներին կազմել է միջինում տարեկան 131 տոկոս: 2020 թվականին Տավուշի համայնքներին տրամադրվել է 888 մլն դրամ սուբվենցիա, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 2.2 անգամ:

Նկատենք սակայն, որ 2021 թվականի համար համայնքների սուբվենցիոն ֆինանսավորման պլանավորված մակարդակը զիջում է 2020-ի մակարդակը մոտ 40 տոկոսով:

2020 թվականին դոտացիաները կազմել են 2,991 մլն դրամ, որոնց աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 12 տոկոս, 2021-ին պլանավորվում է դոտացիաների 25 տոկոս աճ, կամ 3,738 մլն դրամ մակարդակ:

Գծապատկեր 23. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ներքին դրամաշնորհների կառուցվածքը



Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

Դոտացիաներ տրամադրվել են Տավուշի մարզի բոլոր 25 համայնքներին: Տրամադրված դոտացիաների միջին մեծությունը կազմել է 124.6 մլն դրամ: Համայնքներից 18-ի կամ 75 տոկոսի դեպքում տրամադրված դոտացիաները չեն գերազանցել 100 մլն դրամը: Միևնույն ժամանակ, Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան և Բերդ համայնքներին տրամադրվել է ընդամենը

[6] «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, Հոդված 2:
[7] «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, Հոդված 5 – Հոդված 16:

2,117 մլն դրամ դոտացիա, որը կազմում է մարզի համայնքներին տրված դոտացիաների ընդհանուր ծավալի 70.8 տոկոսը:

Գծապատկեր 24. Դոտացիաների բաշխումն ըստ համայնքների, մլն դրամ, 2020թ.



Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏՀՀԿ հաշվարկներ

Պետական բյուջեից մարզի բոլոր 24 համայնքներին տրամադրվել են սուբվենցիաներ: Ընդ որում, բոլոր համայնքները ստացել են ընթացիկ սուբվենցիաներ: Տրամադրված ընթացիկ սուբվենցիաների միջին մեծությունը կազմել է 13.2 մլն դրամ:

> ***Սուբվենցիաները*** *համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ են*[8]*:*

Գծապատկեր 25. Ընթացիկ սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների, մլն դրամ, 2020թ.



Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏՀՀԿ հաշվարկներ

2020 թվականին կապիտալ սուբվենցիաներ տրամադրվել են 4 համայնքների՝ Դիլիջան, Բերդ, Իջևան և Սևքար: Հարկ է նշել, որ 2019 թվականին կապիտալ սուբվենցիաներ ստացել են ավելի շատ թվով համայնքներ՝ 12 համայնք:

[8] ՀՀ կառավարության N1708-Ն որոշում «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին», 16.11.2006թ., մաս I.3:

Գծապատկեր 26. Կապիտալ սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների, մլն դրամ, 2020թ.



Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

Տավուշի մարզի համայնքների ընդամենը ծախսերը 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ աճել են 7.7 տոկոսով:

Մարզի համայնքների ընդամենը ծախսերի գերակշիռ մասը՝ 80.6 տոկոսը, կազմում են Բերդ (26.0 տոկոս), Դիլիջան (22.4 տոկոս), Իջևան (15.5 տոկոս), Նոյեմբերյան (10.6 տոկոս) և Այրում (6.0 տոկոս) համայնքների ծախսերը: Հաջորդում են Կողբ (3.8 տոկոս), Աչաջուր (2.6 տոկոս), Այգեհովիտ (2.3 տոկոս), Գանձաքար (2.1 տոկոս), Ազատամուտ (1.9 տոկոս) և Սևքար (1.3 տոկոս) համայնքները: Մյուս համայնքների կշիռը ընդամենը ծախսերում տատանվում է 0.1-ից 1.0 տոկոսի սահմաններում:

Գծապատկեր 27. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի կառուցվածքն ըստ համայնքների, 2020 թվական, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

2020 թվականին համայնքային ծախսերի ամենամեծ գործառական ուղղությունը «Կրթությունն» է, որին ուղղվել է մարզի համայնքների ծախսերի մոտ 30 տոկոսը: Հաջորդում է «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ուղղությունը, որի կշիռը մարզի համայնքների ծախսերի կառուցվածքում վերջին տարիների ընթացքում նվազել է և 2020 թվականին կազմել է 29 տոկոս:

«Շրջակա միջավայրի պաշտպանություն», «Տնտեսական հարաբերություններ», «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» և «Հանգիստ, մշակույթ, կրոն» ոլորտները կազմում եմ համայնքային ծախսրի համապատասխանաբար՝ 13.7, 12.0, 6.7 և 6.6 տոկոսները:

Գծապատկեր 28. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսային ուղղությունների կշիռները ՏՄ համայնքային ամփոփ բյուջեում, 2018-2021թթ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏՀՀԿ հաշվարկներ

Համայնքային ծախսերի 80.3 տոկոսը հանդիսանում են ընթացիկ բնույթի ծախսեր: Այդ թվում աշխատավարձերին և հավելավճարներին է ուղղվում ծախսերի 27 տոկոսը:

Կապիտալ ծախսերի կշիռը ընդամենը ծախսերում կազմում է 29.2 տոկոս: 2019-2020 թվականների ընթացքում համայնքային ծախսերի աճը առավելապես պայմանավորված է եղել կապիտալ ծախսերի աճով, ինչն էլ հանգեցրել է ընթացիկ և կապիտալ ծախսերի համամասնության փոփոխության. կապիտալ ծախսերի կշիռը համայնքային ծախսերում աճել է, իսկ ընթացիկ ծախսերի կշիռը՝ նվազել: 2021-ին ակնկալվում է ընթացիկ ծախսերի համեմատաբար մեծ աճ:

Աղյուսակ 4. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգումը, 2018-2021թթ.

	2018		2019		2020		2021	
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%
Ընդամենը ծախսեր	**3,289.8**	***100.0***	**4,475.6**	***100.0***	**4,819.4**	***100.0***	***6,236.6***	***100.0***
Ընթացիկ ծախսեր	3,320.6	100.9	3,779.8	84.5	3,869.4	80.3	5,098.4	81.7
Աշխատավարձ և հավելավճարներ	*1,060.3*	*32.2*	*1,184.8*	*26.5*	*1,304.3*	*27.1*	*1,440.4*	*23.1*
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	404.0	12.3	995.8	22.2	1,404.9	29.2	1,426.2	22.9
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	- 434.8	- 13.2	- 300.1	- 6.7	- 454.9	- 9.4	-288.0	-4.6

Աղբյուր՝ ՀՀ Տավուշի մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ

Սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացման նպատակով 2019 և 2020 թվականների ընթացքում Տավուշի մարզի 11 համայնքներում իրականացվող կապիտալ սուբվենցիոն ծրագրերին պետական բյուջեից ուղղվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ համաֆինանսավորում: Նկատենք սակայն, որ 6 համայնքների 10 ծրագրերի 605.2 մլն դրամ համաֆինանսավորումը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է միայն 2020 թվականի դեկտեմբեր ամսին[9], հետևաբար այդ ծրագրերը փաստացի կիրականացվեն 2021 թվականի ընթացքում[10]

Սուբվենցիոն ծրագրերի կառուցվածքում գերակշռել են տնտեսական ենթակառուցվածների զարգացմանն ուղված ծրագրերը, որոնց ուղղվող պետական համաֆինանսավորումը

Գծապատկեր 29. Սուբվենցիոն ծրագրերի բաշխումն ըստ ոլորտների, մլն դրամ



Գծապատկեր 30. Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման բաշխումն ըստ համայնքների, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏՋՀԿ հաշվարկներ

[9] ՀՀ կառավարության 2112-Ն (17.12.2020) և 2183-Ն (24.12.2020) որոշումներ:

[10] Պայմանավորված կոնկրետ ծրագրի ոլորտով, առանձնահատկությամբ, համայնքի աշխարհագրական դիրքով, ինչպես նաև տվյալ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա այդ ծրագրի ազդեցությամբ՝ պետական բյուջեից համաֆինանսավորվում է համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայիոն ծրագրերի ընդհանուր արժեքի 30-ից 70 տոկոսը:

կազմել է 937.8 մլն դրամ: Հաջորդում են սոցիալական և մշակութային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերը՝ 211.6 մլն դրամ պետական ֆինանսավորմամբ, և գյուղատնտեսական ծրագրերը՝ 50.8 մլն դրամ պետական ֆինանսավորմամբ:

Պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաների մեծ մասը՝ 82.6 տոկոսն ուղղվել է Բերդ (38.1 տոկոս), Դիլիջան (33.2 տոկոս) և Իջևան (11.3 տոկոս) համայնքներում իրականացվող ծրագրերին:

Մարզի համայնքներից 4-ը 2019 և 2020 թվականների ընթացքում իրականացրել են 3 և ավելի թվով սուբվենցիոն ծրագրեր, մասնավորապես՝ Ազատամուտ և Գանձաքար համայնքներն իրականացրել են 3-ական ծրագիր, Դիլիջանը՝ 4 ծրագիր և Բերդը՝ 8 ծրագիր: 2-ական ծրագիր իրականացրած համայնքները 4-ն են: 13 համայնքներ այս իմաստով պասիվ են և սուբվենցիոն ծրագրեր չեն իրականացրել (տե՛ս գծապատկեր 31):

Գծապատկեր 31. Համայնքների բաշխումն ըստ սուբվենցիոն ծրագրերի քանակի, 2019-2020թթ.



Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏՋՀԿ հաշվարկներ

Տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի թվում գերակշռում են ներհամայնքային ճանապարհների կառուցմանը և նորոգմանն ուղղված ծրագրերը: Քննարկվող երկու տարիների ընթացքում 6 համայնքներում իրականացվել են ճանապարհների կառուցման կամ նորոգման աշխատանքներ, որոնց ուղղվել է 783.2 մլն դրամ:

3 համայնքներում իրականացվել են խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի կառուցման և նորոգման ծրագրեր՝ 74.4 մլն դրամ համաֆինանսավորմամբ: Եվս 3 համայնքներում իրականացվել են փողոցային լուսավորության համակարգերի կառուցման և նորոգմանն ուղղված ծրագրեր, որոնց ուղղվել է 40.0 մլն դրամ:

2 համայնքներում տարատեսակ մեքենասարքավորումների ձեռքբերմանն է ուղղվել 18.4 մլն դրամ. Գանձաքար համայնքում 4.3 մլն դրամ ուղղվել է գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերմանը և Բերդ համայնքում 14.1 մլն դրամ ուղղվել է հասարակական տրանսպորտային ցանցի համալրմանը:

Գյուղատնտեսական նշանակության ծրագրերը հիմնականում ուղղված են ոռոգման համակարգերի բարելավումներին: Մարզի 2 համայնքներում ոռոգման համակարգի կառուցման և նորոգման ծրագրերին է ուղղվել 37.1 մլն դրամ:

Սոցիալ-մշակութային նշանակության սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 3 համայնքներում իրականացվել են բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգման ծրագրեր, որոնց ուղղվել է 115.6 մլն դրամ:

Դիլիջանում նորոգվել են մանկապարտեզների շենքեր, Նոյեմբերյանում կառուցվել է համայնքային շուկա, Ազատամուտ համայնքում իրականացվել է համայնքապետարանի շենքի ձեռքբերման ծրագիր, իսկ Բերդ համայնքում՝ մշակույթի տների վերանորոգում:

Գծապատկեր 32. Պետական բյուջեից ՏՄ համայնքներին տրամադրված սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների և ուղղությունների, մլն դրամ, 2019-2020թթ.

	Ճանապարհների կառուցում/նորոգում	Մեքենասարքավորումների ձեռքբերում	Մանկապարտեզների կառուցում/նորոգում	Հասարակական շենքերի (կառուցում/վերանորոգում)	Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	Խմելու ջրամատակարարման, ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	Շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում	Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	Ընդամենը, մլն դրամ	Ընդամենը, տոկոս
Ազատամուտ				5.4			45.8		51.2	4.3
Այգեհովիտ	26.5				28.9				55.4	4.6
Այրում							2.2		2.2	0.2
Բերդ	288.1	14.1		33.5		35.1	67.6	18.6	457.1	38.1
Գանձաքար		4.3			8.3			7.2	19.8	1.6
Գետահովիտ						5.9			5.9	0.5
Դիլիջան	315.6		83.2						398.8	33.2
Իջևան	135.3								135.3	11.3
Լուսաձոր	3.2								3.2	0.3
Նոյեմբերյան	14.4			9.4					23.8	2.0
Սևքար						33.3		14.2	47.5	4.0
Ընդամենը, մլն դրամ	783.2	18.4	83.2	48.3	37.1	74.4	115.6	40.0	1,200.2	-
Ընդամենը, տոկոս	65.3	1.5	6.9	4.0	3.1	6.2	9.6	3.3	-	100.0

Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏԶՀԿ հաշվարկներ

ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Բացի համայնքներին տրամադրվող դոտացիաներից և սուբվենցիաներից, ինչպես նաև պետական բյուջեից հանրապետական մակարդակով իրականացվող բյուջետային ծրագրերից, ստորև առանձնացնում ենք մի շարք արտաքին օժանդակությամբ իրականացվող ծրագրեր[11], որոնք էական ազդեցություն ունեն Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից և ուղղված են մարզի առանձին հիմնախնդիրների լուծմանը:

- ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող **Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրի** շրջանակներում Տավուշի մարզի 5 խոշորացված համայնքներում իրականացվել են ներդրումներ՝ համայնքային զարգացման սոցիալական, տնտեսական, սանիտարական և շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածքներում:

Համայնք	Էներգախնայողություն		Հանրային ծառայությունների որակի բարձրացում (տեխնիկական վերազինում)	Գյուղատնտեսության աջակցություն (տեխնիկական վերազինում)	Բարձր տեխնոլոգիաների ոլորտի աջակցություն (ինժեներական լաբորատորիաների հիմնում)	Իրականացման կարգավիճակը
	Արևային կայանների կառուցում	Վառելիքային բրիկետների արտադրության հիմնում				
Դիլիջան	✓		✓	✓	✓	Ընթացքում է
Նոյեմբերյան	✓		✓	✓		Ընթացքում է
Այրում			✓	✓		Ավարտական փուլում է
Կողբ	✓		✓	✓		Ավարտական փուլում է
Բերդ	✓	✓	✓	✓		Նոր է մեկնարկում

- ԳԷՀ աջակցությամբ իրականացվող **Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն ծրագրի**՝ հողերի կայուն կառավարման բաղադրիչի շրջանակներում Տավուշի մարզի 7 բնակավայրերում իրականացվել է ջրամատակարարման համակարգերի բարելավում:

	Կողբ	Արծվաբերդ	Կոթի	Այգեձոր	Չինչին	Հաղարծին	Նորաշեն
Ջրամատակարարման համակարգերի բարելավում, վերակառուցում	✓	✓	✓	✓	✓	✓	✓

[11] Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային և դրամաշնորհային բոլոր այն ծրագրերը, որոնք չեն իրականացվում պետական բյուջեի միջոցով, այս խմբում ներառված չեն:

- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի** շրջանակներում Տավուշի մարզում իրականացվել են համայնքների ջրագծերի, առողջապահության, կրթության, մշակույթի, հատուկ խնամքի և ենթակառուցվածքների ոլորտի վերականգնման և շինարարության աշխատանքներ:

	Միկրոծրագիր	Բնակավայր	Իրականացման կարգավիճակը
	Մանկապարտեզի կառուցում	Արծվաբերդ	Իրականացված է
		Նավուր	Իրականացված է
	Մանկապարտեզի վերակառուցում	Ազատամուտ	Իրականացված է
		Բերդ	Իրականացված է
	Դպրոցի վերակառուցում	Պտղավան	Իրականացված է
	Դպրոցի մարզադահլիճի վերակառուցում, կառուցում	Բագրատաշեն	Իրականացված է
	«Հույսի կամուրջ» գրասենյակի վերակառուցում	Նոյեմբերյան	Իրականացված է
	Գյուղի հավաքատեղիի վերակառուցում	Այգեպար	Իրականացված է
	Համայնքի կենտրոնի կառուցում	Վերին Կարմիր Աղբյուր	Իրականացված է
	Խմելու ջրի նոր ջրատարի կառուցում	Ոսկեպար	Իրականացված է
	Խմելու ջրամատակարարման համակարգի վերակառուցում	Վարագավան	Իրականացված է
		Վերին Ծաղկավան	
	Խմելու ջրամատակարարման խողովակաշարի կառուցում, ՕԿՋ-ների կառուցում/հիմնանորոգում և բաշխիչ ցանցի վերակառուցում	Արճիս	Ընթացքում է
		Լճկաձոր	Ընթացքում է
		Մովսես	Ընթացքում է
	Կոմունալ ծառայությունների բարելավում, հասարակական տրանսպորտային համակարգի ձևավորում և ճանապարհների բարեկարգում	Բերդ	Իրականացված է

- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի** շրջանակներում Տավուշի մարզում կառուցվել են 10,339 կմ ջրագծեր, 5 հովվի տնակ և 3 փարախ, 1 անասնաբուժական սպասարկման կենտրոն, ինչպես նաև ներդրումներ են իրականացվել սննդամթերքի 4 գործարաններում՝ արժեշղթաներում տեղական արտադրողների և վերամշակողների կարողությունները բարձրացնելու նպատակով:

	Բնակավայր	Ջրարբիացման համակարգ, միավոր	Խողովակաշարի երկարություն, մ	Հովվի տնակ, միավոր	Փարախ, միավոր	Իրականացման կարգավիճակը
I բաղադրիչ Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգեր	Ծաղկավան	2	590	0	0	Իրականացված է
	Արծվաբերդ	1	1,130	2	1	Իրականացված է
	Չինարի	2	686	0	0	Իրականացված է
	Տավուշ	1	1,250	2	1	Իրականացված է
	Մովսես	3	633	0	0	Իրականացված է
	Վարագավան	2	430	0	0	Իրականացված է
	Բերդ	2	1,050	0	0	Իրականացված է
	Ն. Կարմիր Աղբյուր	3	750	0	0	Իրականացված է
	Կոթի	3	720	0	0	Իրականացված է
	Կողբ	1	2,750	1	1	Իրականացված է
	Դիտավան	1	350	0	0	Իրականացված է

	Արժեշղթա	Հայտատու	Բնակավայր	Ծրագիր	Իրականացման կարգավիճակը
II բաղադրիչ Արժեշղթայի զարգացում	Միրգ և բանջարեղեն	«Արթուր և Էդիտա» ՍՊԸ	Ջուջևան	Ջուջևանի պահածոյացման արտադրամասի սարքավորումների վերազինման, տեխնոլոգիաների արդիականացման և սննդի անվտանգության բարելավում	Իրականացված է
		«Արթուր Բաբաջանյան» Ա/Ձ	Բագրատաշեն	Չրերի արտադրություն, սարքավորումների վերազինում և արտադրանքի արտահանում	Իրականացված է
		«Բերդավանի գինու գործարան» ԲԲԸ	Բերդավան	Առանց շաքարի կոմպոտների, ջեմերի և մուրաբաների արտադրություն	Ընթացքում է
	Թեյ	«Էդնա» ՍՊԸ	Տավուշ	Արատադրական ծավալների մեծացում և արտահանման ներուժի օգտագործում	Ընթացքում է

	Համայնք	Ծրագիր	Իրականացման կարգավիճակը
III բաղադրիչ Պետական կառույցների կարողությունների հզորացում	Բերդ	Անասնաբուժական սպասարկման կենտրոնի բացում	Իրականացված է

- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի** ներքո 2009 թվականից ի վեր Տավուշի մարզում վերանորոգվել է 99.09 կմ երկարությամբ ճանապարհ:

Ճանապարհահատված	Երկարություն (կմ)
Բերդ-Թովուզ-Ներքին Կարմիրաղբյուր կմ0+000-կմ2+580	2.58
Բերդ-Թովուզ-Ներքին Կարմիրաղբյուր կմ2+580-կմ7+200	4.62
Փոքր Այրում–Մեծ Այրում–Ճոճկան կմ1+984–կմ6+000	4.02
Փոքր Այրում–Մեծ Այրում–Ճոճկան կմ6+000–կմ9+820	3.82
Մ4 (Մ-16)-Աչաջուր կմ0+000-կմ3+676	3.68
Մ4-Խաշտարակ-Լուսահովիտ կմ0+000-կմ5+520	5.52
Մովսեսգյուղ-Նորաշեն-Վերին Կարմիր Աղբյուր կմ0+000-կմ8+815	8.82
Իջևան-Գանձաքար, կմ0+000-կմ6+970	6.97
Չինարի-Այգեձոր-Արծվաբերդ-Վերին Կարմիր Աղբյուր-Բերդ կմ0+000-կմ22+900	22.90
Չինարի-Այգեձոր-Արծվաբերդ-Վերին Կարմիր Աղբյուր-Բերդ կմ22+900-կմ32+520	9.62
Բերդ-Նավուր-Իծաքար կմ32+505-կմ43+570	11.07
Բերդ-Այգեձոր-Չինարի կմ0+000-կմ4+450	4.54
Հ36-Մովսես-Չորաթան-Նորաշեն կմ0+000-կմ 5+587	5.59
Մ6-Արճիս կմ0+000-կմ3+671.80	3.67
Մ4-Գետահովիտ կմ0+000-կմ1+404.71	1.68

- ԵՄ աջակցությամբ իրականացվող **Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի** շրջանակներում Տավուշի մարզում իրականացվում են տարածքային զարգացման 2 պիլոտային ծրագրեր.
    - ✓ Դիլիջանի և հարակից համայնքների զարգացման նախաձեռնություն, (իրականացնող՝ «ԻԴԵԱ» հիմնադրամ),
    - ✓ Տավուշի մարզի ինտեգրված և համաչափ տնտեսական զարգացում, (իրականացնող՝ «Համայնքային զարգացման կենտրոն» ՀԿ):

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների կառուցվածն ըստ եկամուտների աղբյուրների, Տավուշի մարզ 5
Աղյուսակ 2. Տավուշի մարզի զարգացման ռազմավարական ուղղությունները և չափորոշիչները 8
Աղյուսակ 3. Տավուշի մարզի համայնքային բյուջեների հիմնական ցուցանիշները, 2018-2021 թվականներ 9
Աղյուսակ 4. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգումը, 2018-2021թթ. 17

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը և դրանցում հանգրվանած ներգնա զբոսաշրջիկների թվաքանակն ըստ մարզերի, 2019թ. 3
Գծապատկեր 2. Տավուշի մարզի բնակչության կառուցվածքն ըստ բնակավայրերի, տոկոս 3
Գծապատկեր 3. ՀՆԱ կառուցվածքն ըստ մարզերի, 2018թ., տոկոս 4
Գծապատկեր 4. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ըստ մարզերի, 2018թ., հազար դրամ 4
Գծապատկեր 5. Տավուշի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի կշիռը համապատասխան ճյուղերի ՀՀ համախառն արտադրանքի ծավալում, 2019թ., տոկոս 4
Գծապատկեր 6. Տավուշի մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ ճյուղերի, 2019թ., տոկոս .. 4
Գծապատկեր 7. Զբաղվածության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս 5
Գծապատկեր 8. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս 5
Գծապատկեր 9. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները, դրամ 5
Գծապատկեր 10. Միջին ամսական աշխատավարձի մակարդակն ըստ մարզերի, 2019թ., դրամ 6
Գծապատկեր 11. Տավուշի մարզում SS մեկ շնչի հաշվով ամսական սպառողական ծախսերի դինամիկան, 2015-2019թթ. 6
Գծապատկեր 12. Աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների դինամիկան Տավուշի մարզում և ՀՀ-ում, 2015-2019թթ., տոկոս 7
Գծապատկեր 13. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող SS-ների բաշխումն ըստ մարզերի, 2020 թվականի տարեվերջի դրությամբ 7
Գծապատկեր 14. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերի ցուցանիշը, ՀՀ դրամ 9
Գծապատկեր 15. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտների ցուցանիշը, ՀՀ դրամ 9
Գծապատկեր 16. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերն ըստ մարզերի, ՀՀ դրամ 10
Գծապատկեր 17. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտներն ըստ մարզերի, ՀՀ դրամ 10
Գծապատկեր 18. Տավուշի մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների կառուցվածքը, 2018 և 2020թթ, տոկոս 10
Գծապատկեր 19. Տավուշի մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտները, 2018-2021թթ., մլն դրամ 11
Գծապատկեր 20. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի կառուցվածքը, 2018-2021թթ., տոկոս 11
Գծապատկեր 21. ՏՄ համայնքային բյուջեի հարկերի և տուրքերի դինամիկան, 2018-2021թթ., հազար դրամ 11
Գծապատկեր 22. Համայնքների բաշխումն ըստ մեկ բնակչի հաշվով գույքահարկի մակարդակի 12
Գծապատկեր 23. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ներքին դրամաշնորհների կառուցվածքը 13
Գծապատկեր 24. Դոտացիաների բաշխումն ըստ համայնքների, մլն դրամ, 2020թ. 14
Գծապատկեր 25. Ընթացիկ սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների, մլն դրամ, 2020թ. 14
Գծապատկեր 26. Կապիտալ սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների, մլն դրամ, 2020թ. 15
Գծապատկեր 27. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի կառուցվածքն ըստ համայնքների, 2020 թվական, տոկոս 15
Գծապատկեր 28. ՏՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսային ուղղությունների կշիռները ՏՄ համայնքային ամփոփ բյուջեում, 2018-2021թթ., տոկոս 16
Գծապատկեր 29. Սուբվենցիոն ծրագրերի բաշխումն ըստ ոլորտների, մլն դրամ 17
Գծապատկեր 30. Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման բաշխումն ըստ համայնքների, տոկոս 17
Գծապատկեր 31. Համայնքների բաշխումն ըստ սուբվենցիոն ծրագրերի քանակի, 2019-2020թթ. 18
Գծապատկեր 32. Պետական բյուջեից ՏՄ համայնքներին տրամադրված սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների և ուղղությունների, մլն դրամ, 2019-2020թթ. 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Ա/Ձ	Անհատ ձեռնարկատեր
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական միություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՄևԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏՄ	Տավուշի մարզ
ՏՏ	Տնային տնտեսություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կառույց
ՕԿՋ	Օրական կարգավորող ջրավազան
ՖՆ	Ֆինանսների նախարարություն